

# ՄՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՀՈՒՆԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

28.05.2020



Սիրելի՛ սյունեցիներ

Ընդունեք շնորհավորանքներս Մայիսի 28-ի՝ Հանրապետության տոնի կապակցությամբ:

Այն մեզ համար ազգային ամենաթանկ արժեքի՝ ինքնիշխան ու անկախ պետականության վերականգնման օրն է, որը շունչ ու մարմին տվեց հայոց դարավոր երազանքին. 1918թ. մայիսի 28-ին Հայոց ազգային խորհուրդը հայտարարեց անկախ Հայաստանի Հանրապետություն ստեղծելու մասին:

Այն ժամանակ ընդամենը երկամյա պատմություն ունեցավ մեր հանրապետությունը, սակայն հետագայում դարձավ ոգեշնչման աղբյուր ազգային շարժումների, պայքարների, զարթոնքի ու նորից անկախ Հայաստան ունենալու մեր նպատակի համար: Եվ այսօր կրկին երջանկություն ունենք լինել Հայաստանի Հանրապետության քաղաքացի, ուստի մաղթում եմ, որ գնահատենք, ամուր պահենք ու փայփայենք մեծ դժվարությամբ ժառանգած Հայրենիքը:

Եվս մեկ անգամ շնորհավորելով Հանրապետության տոնի առիթով՝ ցանկանում եմ բոլորիս ժամանակավոր դժվարությունների հաղթահարում, խաղաղություն, բարեկեցիկ կյանք, հզոր ու ծաղկուն Հայաստան: